45. ԱՍՏԾՈՒ ԳՐԱԾԸ ԲՈՋՈՒԼՄԻՇ Չ'ԷՂՆԻ

Վախտոք մե թագավորըմ կ'էղնի։ Լալի հետ թապդիր կըլըղ[1] գըլին, ախչարք պտտին կը, իրեն յուխարեն ի՞նչ վիճակի մեջն է։

Գուքան կաշեն օր չորան ճամփու վըրեն պառկեցուցեր է օչխարը։

Կ'ըսե թե.— Չորան, մենք անոթի ենք, մեզի մե թաս կաթ չե՞ս տա։

Կ'ըսե.— Բարով, հազար բարի, ընչի՞ չեմ տա։

Չորանը թագավորին մեկ թաս կաթ կթե գը, տավարչուղեն հաց կը հանե, կուտա թագավորին։

Գելլին գուքան չորնի գեղը։ Չորան օխչարը իրկուն տանի գը գեղ։

Բերեն էդ թագավորն ու Լալեն չորնին միսաֆիր կուտան։

Հիրկուն օր կ'էղնի թագավորին, Լալին հաց կուտան։

Էդ Լալեն իմաստուն էր, կը ծիծաղի։

Թագավոր կ'ըսե.— Լալա՛, ընչի՞ ծիծաղար։

Կ'ըսե.— Բան չը կա, միտքս բան ընգավ ծիծաղա։

Շատ օր թագավոր էդոր չիբելաթ գընգնի կըսե.

— Ի՞նչ պիտի էղնի, քու աղչիկդ էս չորնի տղի նեսիբն է, աստվածություն գրել է։

Կ'ըսե թե.— Աստու գրած գիրը բոզմիշ կ'էնեմ։

---

[1] Տարազափոխ (Մ. Բ.)։

Կ'ըսե.— Յաղբլան՝ բոզուլմաղ։

Կ'ըսե.— Զորան ախպար, քեզի մե բալուլ տղեմ կա։ Քու տղիդ կշեռքով մեն օսկի տամ, քու տղեդ տու ընձի։

Էդիկ կէրթա կնդանը կըսե.— Կնիկ, բե էս միսաֆիրին տանք մեր տղեն, էնոր ծանրութենով մեն օսկի առնինք։

Է, ո՞ւր է, մոր շիդեր նազ կէնե թե՝ ես իմ տղաս չեմ տա։

— Ջանըմ, աստված օր տա, մեմե կուտա։

Կընդա բարքն է կառնի, բերեն տղան կուտան թագավորին, էնոր ծանրութենով օսկի կ'առնին։

Սարախտան միսաֆիրներ գելլեն ու էս տղեն կ'առնին ու կէրթան։

Տանին, գեղի ցածի դին ղամիշլըղըմ կա, ցըքեն էն ղամիշլըղի մեջ, իրենք կէրթան։

Դառնա թագավոր Լալին կ'ըսե.— Տեսա՞ր, ղու կըսեիր՝ ասսու գրածը բոզմիշ չես էնե, տեսա՞ր ես ո՞ման բոզմիշ էրի։

Լալեն կ'ըսե.— Ասսու դրած բոզուլմիշ չի էղնի։

Թագավորը կ'էրթա իրեն թախտը նստի գը։

Պառավիմ մեկին էծ կէղնի, ասսու հրամանքով էդ էծը կ'էրթա նախրից կը ջոկվի, կ'էրթա ղամիշլըղի մեջ չորնի տըղին ծիծ կուտա։

Պառավ մեկ օրըմ գուքա չորնի վրեն կռիվ, թե.— Ես քոռ պառավըմ, մեկ էծ ունիմ, դու ընչի կթես ղը իմ էծը։

— Ջանըմ,— կըսե,— մայրիկ, ես քու էծը չեմ կթե,— կըսե,— էսօր ընձի օր տուր, էքվան ցորեկվան ես օր օչխարը կը բերեմ, ես քու իծուն մուղաթ կենամ, աշեմ քի ո՞ւմ դուռը կէրթա, կթեն գը։

Զորանը բերե գը օչխարը էքսը գեղ։ Կ'աշե օր էդ էծը գեղին օր մոտենա գը, ջոկվի գը ու դեմ էդ ղամիշլըղը կ'էրթա։

Էծը կ'էրթա, չորանը կ'էրթա։ Կ'էրթա էծը մտնի գը էդ ղամիշլըղը։

Զորանը խալվաթ կ'էրթա էդ իծու հետևեն։ Կ'էրթա պաժղըտի գը, էդ տղեն մտնի գը տակը, ծծե գը։

Զորան համա իծի օտացեն գը պռնե։ Էծն էլ, տըղեն էլ կառնի գուքա գեղ։

Կ'ըսե թե.— Պառավ, հա քու էծ։

Զորանն էդ տղեն կառնի գուքա իրեն տուն։

Կ'ըսե.— Կնիկ, ահա աստված մեմե մեզի մանչ տղեմ տվեց։

Թագավորը տասնվեց տարի կը նստի։ Լալին կը կանչե, կըսե.— Էլի մե յուխարի մեջ էրթանք, աշենք յուխարի դարդը ի՞նչ է։

[1] Գրածը չավրիր (Ս. Բ.)։

Գելլեն դեմի էսման յուխարի երկիրներ դուքան։

Աքսերի[1] դուքան օր մեմե էն առաջի չորանի մոտ, կաշեն քի չորան օխշար պառկեցուցե հաց կուտե։

Գուքա կ'ըսե.— Բարի լուս, չորան։

Կ'ըսե.— Բարով, հազար բարի։

Քեչեն ձգե կը տակ միսաֆիրին, թասով կաթ կթե գը, թագավորին բերե կուտա[2]։

Հ'իրկուն դեմ էղավ, չորնի գեղը էկավ։ Օրը մութն էր, չորանն է գնաց գեղ։ էկավ իրեն տուն։ Գզիրը թագավորին բերավ չորնին միսաֆիր էրավ։

Միսաֆիրներուն հաց բերին, կերան, ուտելեն վերշը Լալեն մեմե խնդաց խալվաթը։

Թագավոր ըսեց.— Լալա, ընչի՞ կը խնդաս։

Կ'ըսե.— Ջանըմ աստվածութուն քու աղշիկ էս մանչուն դրել է, դրել է, գրել է, էն գիրը բոզմիշ չէղնի ու չէղնի։

Թագավոր կըսե.— Ես բոզմիշ կ'էնեմ։

Չորնին կ'ըսե.— Չորան, մե գիրըմ գրեմ, քու մանչը պիտի տանի թագավորին, էնոր շատ փարա կուտամ։

Չորան կըսե.— Ջանըմ, իմ տղես դուս չի էլե, ճամփա չիտե, էս գիրը ես տանիմ։

— Չէ,— կըսե,— իլլահ[3] տղեդ պիտի տանի։

Էդ չորնի բարքը կառնեն։ Մե գիրըմ գրե գը սաղրազամին, կըսե թե. «Էս տղեն իրկունը գուքա, իրկունը զարկես ճիտը, մութե մութ գուքա, մութե մութ կը զարկես ճիտը»։

Էս տղեն գիրը ծոցը դնե գը ու դեմը թագավորի տունը կ'էրթա։ Գնա՞ց էս տղեն ելավ թագավորի քաղաքը։ Գնաց էսղին աշեց, էն դին աշեց, գնաց պալատեն նե մտավ, խաս բախչի ախպըրի վըրեն քնավ։

Թագավորի աղջիկն է, ելավ ժուռ գալու։ էկավ տեսավ օր քի տըղեն քըներ է, փուռչալ-փուռչալ կը քրտնի։

Թագավորի ախչիկ կ'ըսե.— Ա՜խ, քեշկե ընձի տան ես մանչուն։ Գուքա վրա օր կաշե քի՝ թագավորի տված թղթի ճոթը աղի ծոցի մեշ կ'էրևա։ Թագավորի աղջիկ կ'ըսե քի. «Հալա աշեմ քի, էս ի՞նչ թուղթ է»։

Կաշե օր իրեն հորը գիր, մոհրը վըրեն, կը բանա կարթա օր

---

[1] Հակառակի պես (Մ. Բ.)։

[2] Բնագրում՝ բերեց տվավ (Մ. Կ.)։

[3] Անպայման (Մ. Բ.)։

մեջը դրուկ էր. «Հ՚իրկուն էս մանչը գուքա գը, հ՚իրկուն ճիտը զարկեք, մթան գուքա գը, մթանը զարկեք»։

Էդ ախչիկ ուր ծոցի ալմաստ դանակով էդ գրերը՝ «Հ՚իրկուն թե մթան ճիտը զարկեք» կը քերե, իրեն նազուկ ձեռներով կը գրե. «Հ՚իրկունը դա, հ՚իրկունը ախչիկս տաք էսոր, մթանը գա, մթանը տաք էսոր»։

Մանչը ղարթի գը, գելլե կէրթա սադրազամի քով։ Տանի սադրազամի ծնդին էդ թուղթը դնե գը։

Էդ սադրազամ թուղթը կարթա գը. «Հ՚իրկունը գուքա, հ՚իրկունը տաս աղջիկս էսոր, սարախտանը գա՛, սարախտանը տաք»։

Էդոնք թոփ կէղնին, սադրազամ կըսե անոնց քի.— Թագավորը էսման է դրած։

Էս աղջիկը վերցնեն էդ մանչուն կուտան։

Թագավորն ու Լալեն աշխարք պտըտվին, դառնան դուքան իրենց քաղաքը, թագավորն ելավ նստավ իրեն թախթը։

Սադրազամ, մարթիկ թոփ կ՚էղնին, թագավորի քովը կէրթան։ Հարց ու բարև կ՚էնեն թագավորի հետ, վերջը կըսե թագավոր.

— Ես էսման մե թուղթըմ, էսման մե տղիմ հետ ղրկեցի, ի՞նչ էրիք։

Կ՚ըսեն.— Թագավոր սաղ մնա, քու թուղթըդ գա, մենք չը կատարենք։

— Ի՞նչըխ էրիք։

— Ի՞նչըխ էրինք, քու թուղթը կասեր. «Էդ մանչը հ՚իրկուն գա, հ՚իրկուն իմ աղջիկս տվեք էդ մանչուն, սարախտան գա, սարախտան տվեք»։

Մենք էլ էդման էրինք, հարսնիքը բռնեցինք մանչ ու աղջիկդ պսակեցինք։

Թագավոր զարմացավ ըսավ.— Ջանըմ, էս թուղթը էսման պըտի չ՚էղներ, ես դրեր եմ թե գլուխը զարկեք, դուք իմ աղջիկը ընչի՞ տվիք էնոր։

Սադրազամը թուղթը դուրս կը հանե, կասե— Ահա քու մեռհրգ, քու թուղթդ։

Թագավորը կաշե օր հախգաթ իրեն գրած գիր փոխվեր է։

Արթըխ թագավոր ըսավ.— Հա՜յ, հա՜յ, ճիշտ է օր, ասսու գրած գիրը չի բոզուվմիշ էղնի։